

ինչպէս կը վկայէ ինձիմեան¹. «առ ստորա-
տով Փէօսէ (=Առկաւէտ) լերինս է բլուր՝
յորում է տեղի կատարման սրբոց Առ-
քիասանց, ուր ամի ամի յաւուրս Վերա-
փոխման Աստուածածնի եւ Խաչվերացին
յաճախեն բազմութիւնը ուխտաւորաց
յազգէս հայոց: Ե անդ մինչեւ ցայսօր
վէմ, եւ ի վիմին նիշը կարմիրը, ուր բառ
աւանդելոյ հատան զլումիք սրբոց Առ-
քիասանց, եւ մնացին նիշը արեան նոցա:
Առ ոստ սոյն այս լերին է եւ լուսաղ-
րիւր նորա»: Ուր զիտելու ենք որ Վերա-
փոխման ժամանակի ուխտազնացութիւնը
Առքիասանց յիշատակաւ է, որոնց նահա-
ռակութեան տօնը Յայսմաւուրը կը նշա-
նակեն Օգոստոս 27-ին, իսկ Խաչվերացի
ուխտազնացութիւնը կը վերաբերի Աս-
եանց, որոնց նահատակութեան օրը, ինչ-
պէս տեսանք, նշանակուած է Անպտեմբեր
9-ին:

9. Ամէն ինչ ուրեմն - ժամանակազրութիւն, աշխարհագրական հանգամանք, պատմուածք, աւանդութիւնք եւ անձինք - կը միաբանին հաւաստելու որ Եւստաթէոսթլաշիտափի վկայաբանութիւնը զուտ արձագանք մ'է Ոսկեանց-Առւրիասանց վկայաբանութեան եւ թէ այս հայկական հողին վրայ նուիրագործուած պատմութիւնն է աղքիւր եւ ներշնչող բոլոր Արեւելք եւ Արեւմուտք տարածուած ժողովրդական բանահիւսութեան:

Հայաստանի յատուկ աշխարհագրական տեղը, — մանաւանդ այն գաւառին, ուր մեր ուսումնակրած դէպքերը կը հանդիպին, սեպհական դիրքը, — միեւնոյն պարթեւական միապետութիւնը որ Հնդկաստանէն մինչեւ ի Փոքր Ասիա, մինչեւ Միջազգետք եւ Ասորիք կը տարածուէր միեւնոյն ընտանիքի ամենամերձ ազգակից թագաւորներու վարչութեան ներքեւ, — չոռվմէական բանակներու յարատեւ անցւուզարձն ու շփումը արեւելեան ժողովրդոց հետ, — հրէական ազգին ընդհաւ

1. ինձիձեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխառչի. — Ասիա, հատոր Ա. (1806) էջ 117.

Այսպէս ահաւասիկ բոլոր մեր ներկայ
ուսումնասիրութիւնը նմանեցաւ այն աշ-
խառութեան, զոր գիտական լեզուով սո-
վոր ենք կոչելու՝ հնախօսական պեղումն.
Եւ մենք հետազոտելով Եւստաթէունան
եղերուացաղն, անոր առասպելախառն
պատմուածքներու կոյտին ներքեւ, Ա. Ռո-
կեանց-Սուբիասանց նահատակութեան վը-
կայաբանութեան միջոցաւ, մեր հայրենի
հողին վրայ, մեր հայրենի նուիրական ու
սրբազն աւանդութեանց լոյսով առաջ-
նորդուած, գտանք գեղապանձ անկիւնա-
ցարերն ու հիմերը, հաւատքի վէմերով
ամրակուռ, նահատակներու մարտիրոսա-
կան արեամբ շաղախուած, աղօթքներու
եւ պատարազներու սրտարուխ մրմունջ-
ներով խնկաւորուած, դարերու մէջ՝ տա-
րերաց եւ մարդկային բռնական ուժը ու-
ամէնակործան սաստից դէմ մաքառած ան-
տեղիտալի երկնարերճ տաճարի մը, ան-
կիւնացարերն ու հիմերը Առաքելական
քարոզութեան՝ Հայաստանի մէջ:

Յիս եւ Արմէնէի: Այդ հիմնական խնդիրը
ցարդ կը մնայ անլուծելի իր մանրամաս-
նութեանց մէջ, թէեւ նոր ժամանակների
բաղդատական լեզուաբանութիւնը, գրացի
երկիրների՝ Սումերացիների, Խաթթիի,
Ասորեստանի բեւեռագրական դիւանները
եւ Մերձ-Արեւելեան ուրիշ հնախօսական
գիւտերը՝ ի լոյս բերած են մի շարք անվի-
ճելի նոր իրողութիւններ որոնց բանաւոր
համադրութեամբ այժմ ի վիճակի ենք պար-
զելու մեր ցեղախօսութեան ուրուագիծը:
Էական կէտը զոր զուցէ լիօրէն լու-
սաբաննեն ապագայ հնագիտական խուզար-
կութիւնները Հայաստանի մէջ եւ պատ-
մական այլ բնավայրերի վրայ, կը կա-
յանայ մօտ երկու դարերի անստուգու-
թեան պարզման մէջ: Այդ երկու դարերը
կը տարածուին 714-520 Ք. Ա. տարի-

Ների միջեւ, այսինքն հայ ազգութեան ցեղագրական կազմաւորման ամէնէն վճռական շրջանը:

Ժամանակազրական կարգով մանրաւ
մասնօրէն պիտի բացատրեմ այդ շրջանի
ցեղախօսական ու քաղաքական զրութիւ-
նը՝ նորագոյն տուեալների լոյսին տակ։
Առ այժմ բաւական է ըսել թէ կայ պատ-
մական ապացոյց հաստատելու որ 714
թուին Ք. Ա. Ասորեստանի լարգոն Բ.
թագաւորի արշաւանքի ժամանակ՝ ինք-
նասպանութիւն զործեց վանի նախա-
հայկական խալտէական թագաւոր Ռուսաս
Բ.Ռ. (պատճառները մանրամասնօրէն իր
կարգին): Խալտէական-Ռուբարտական պե-
տութիւնը զգալապէս թուլացաւ Ռուսաս
Բ.Բ մահով, թէեւ նախահայկական այդ
թագաւորութիւնը նշանակելի ընդհատումեւ-
րով շարունակեց իր գոյութիւնը մինչեւ
585 թուական Ք. Ա.:

Երեւութապէս բախտորոշ այդ երկու
դարերի շրջանին պատահեցան կարեւոր
քաղաքական դէպքեր։ Այդ դէպքերի հա-
մարդական ուսումնասիրութեամբ միայն
հնարաւոր է ընդգծել որոշ թուով պարզ
եզրակացութիւններ։ Այդ դէպքերէն զըլ-
խաւորներն են Գամբաց (Գիմիկացիք-
Գամիքը) եւ անոնց յաջորդող Ակիթաց-
ւոց արշաւանքները կովկասի լեռնանցք-
ներէն, այդ արշաւանքների հետեւանքով
Խալտէա-Ուրարտուի եւ ապա Ասորես-
տանի ցնցումն ու աստիճանական անկու-
մը։ Վերջապէս Մարական կայսրութեան
կազմութիւնը կիաքսարի ձեռքով եւ ապա
պարսիկ Ախեմենեան պետութեան ծաւա-
լումն ամբողջ կեղրոնական եւ Մերձաւոր
Ասիոյ վրայ։

Քաղաքական վեհապետութեանց իրեւ
բայաջորդ այս պատկերին մէջ կան նաեւ
միջանկեալ անիշխանութեան շրջաններ,
որոնց ընթացքին պատահած պէտք է լի-
նին մեզ համար յոյժ հետաքրքրական
անցքեր։ Այսպէս գոնէ մինչեւ այսօր չեն
գտնուած ո եւ է բեւեռազրական կամ ու-
շիշ գրաւոր արձանագրութիւններ միջան-
կեալ այդ շրջանների մասին։

Ազգերը կը կազմակերպուին եւ կը ստա-
նան ինքնուրոյն կերպարանք մի միայն
դարաւոր պայքարներէ եւ ելեւէջներէ
յետոյ։ Զկայ նախընթացը ազգ կոչուե-
լու արժանի ո եւ է ցեղային խմբաւորումի
որ մի քանի յաղթութիւններով կազմա-
կերպուած, եւ կամ մի քանի պարտու-
թիւններով ընկճուած լինի կարճ ժամա-
նակի մէջ։ Ազգերը իրենց դիմագծութիւնը
եւ խմբական գիտակցութիւնը ձեռք կը
բերեն զարերի ընթացքին ի յայտ բերած
կենսունակութեամբ եւ փորձառութենէն
օգտուելու կարողութիւններով։ Այդ ընդ-
հանուր սկզբունքը տեսանելի է թէ պատ-
մութեան արշալոյսին՝ զանազան պետու-
թիւնների կեանքին մէջ, եւ թէ նոր ժա-
մանակների ակներեւ հասկացողութեամբ։

Այսպէս կոչուած Հնդ-Եւրոպացի մեր
նախահայրերը, ինչ ուղղութեամբ ալ որ
եկած լինին դէպ ի հայկական բարձրա-
ւանդակը, մի միայն լրացուցին եւ գուցէ
աւելի զօրացուցին բնատոհմիկ այն ցե-
ղախօսական խաւը կամ խաւերը որոնք
արդէն հաստատուած էին մեր բնաշխար-
հին մէջ դարեր առաջ:

Այդ մութ ժամանակամիջոցի անցքերի
կապակցութիւնը պարզելու եւ մեր ցեղա-
խօսութեան ամբողջական տարրերը լիո-
րէն ներկայացնելու համար անհրաժեշտ
է նետել մի ակնարկ մեր աշխարհամասի
հնագոյն քաղաքական դրութեան վրայ։
ուսումնասիրել Խորրիի (կամ Խարրիի) եւ
Ռարասուի աշխարհագրական-ցեղագրա-
կան ըմբռնումները, եւ անոնց իմաստն ու-
էութիւնը հայկական տեղանունների եւ
պատմական աւանդական յատուկ անուն-
ների միջոցաւ։ ուսումնասիրել Խաթթիի,

Միտտանիի կայսրութեանց կապերը իրենց
Արեւելեան եւ Հիւսիսային դրացիների
(Հայաստանի) հետ. բաղդատել անոնց յա-
տուկ եւ տեղանուններն հին Հայաստանի
աշխարհագրական եւ վարչական բաժա-
նումների հետ. մէկ խօսքով յառաջ բերել
այն ամէն բեւեռագրական ծանօթութիւն-
ները որոնք լոյս տեսած են մասնաւորա-
պէս վերջին տասն տարուան ընթացքին

եւ որոնք կը նան ո եւ է կերպ
այդ մուլթ շրջանի մասին:

Հետազայ թէզիս լաւ համկանալու համար, հարկ կը համարիմ մի անգամ եւս կրկնելու վերոպրեալ էական կէտերը. որ Հնդ-Եւրոպական մեր նախահայրեր հայկ բարձրաւանդակի վրայ տեղաւորուելէ առաջ այնտեղ կ'ապրէին բազմատեսակ եւ այլալեզու խմբաւորումներ, որ մեր բնավայրը Հայաստան լինելէ առաջ թատրեղած է ամենահին քաղաքակրթութեան - մի մշակոյթ որ ըստ էրնոս Հերցֆելտի նորագոյն պեղումներին, կը տարածուեր Ալիսի ափերէն եւ կողըիսէն՝ Հայաստանի եւ Մըջագետքի վրայով ամբողջ Պարսկաստան. ու Ագումիստան, մինչեւ ինդոս

գետի հովիարք: Նոր-քարային դարաշրթանի (Neolithikum) այդ ժամանակին (4000-2500 թ. Ա. մ.) իր առաջին ապացույցները տուած է միմիայն վերջին քանի մը տարիների մէջ եւ զիստորապէս պատահաբարք: Ա. Քալանդարի գիւտերը Սեւանայ լճի ափին, Զախարովի եւ Մեսչնինովի գիւտերը ձորովի ստորին հովտին մէջ (ի վրաստան), Հերցֆելտի գիւտերը Բերսեպոլիսի եւ Սուսա Բ.Ի. մէջ, Անգլիարշլի գիւտերը Սինտի (Հնդկաստան) մէջ ի յայտ բերած են այդ հնագոյն մշակոյթի մի քանի հետքերը - ժայռերի վրայի գծուած նախնական գեղարուեստական քանդակներ, զարդեղներ, զենքեր, ինեցին եւայլն: Առայժմ չեմ յիշեր Վուլվի եւ Լէնկարնի Անգլօ-Ամերիկան հրաշալի գիւտերը Սումերական զիստոր կերպուների, Ուրի, Քիշի եւ Լարսայի մէջ որովհետեւ անոնք չեն ուզեր դասուիլ մի եւնոյն կարգին: Հետագայ գլուխներին կրացատրեմ այդ:

Արդ, առաջին գաղափարը որ կը ծագ
ընթերցողի մտքին մէջ, այն է թէ ովքը
էին նոր-բարային այդ մշակոյթը՝ ստեղ
ծող այդ ցեղերը կամ ժողովուրդը, մար
դարանական ի՞նչ կազմութիւն եւ դիմա
գիծ ունէին, ի՞նչ լեզու կը խօսէին, և
կամ ցեղագրական ի՞նչ կապեր ունէին
Փոքը Ասելոյ, Հիւսիսային կովկասի, և

զիպառախ եւ կամ հելլէն ցեղերի հետ Պէտք է ենթադրել թէ յաջորդական գաղթութերի եւ նուաճութերի, եւ վերադրեալ քաղաքակրթական նոր տարբերի խառնութիւն մէջ, բնիկ հին ցեղերն, ինչպէս նաև եկուորները բոլորովին չանհետացան մեր բարձրաւանդակէն: Անոնք փոխադարձաբար իրար հաղորդեցին իրենց մշակոյթի եւ լեզուական տարբերը, սովորութեանց եւ առօրեայ կեանքի զիտելիքները: Իրողութիւններ կան ապացուցանելու նաև որ հետազայ Արոյրի դարի (2500-1700 թ. Ա.) եկուորներն աւ թէ մասամբ իւրացուցին երկրի բնիկներէն եւ թէ մասամբ աւ բարորեցին իրենց բերած մշակոյթով:

Բուն նիւթին անցնելէ առաջ կարեւոր է ներկայացնել մի քանի նկատողութիւններ՝ ինդրոյ առարկայ շահեկան հարցը ըստ արժանւոյն գնահատելու համար։
Հայկական բնաշխարհի ամենանախնական այդ մշակութիւնը եւ պատմութեան յայտարերման մէջ հայ զիտնականները դրժրախտաբար ցարդ կատարած են շատ քիչ գեր։ Մինչեւ մի քանի տարի առաջ այնպէս էր մեր ազգ, քաղաքական դրութիւնը որ մենք ոչ միջոց ոչ ալ հնարաւորութիւննենք իսուզարկելու մեր հայրենիքի պատմական վայրերն ու մութ անկիւնները, հաւաքելու եւ ուսումնասիրելու մեր անթիւ յիշատակարաններն ու մնացորդները, թող թէ կատարել հնագիտական պեղումներ։ Այն իրողութիւնը որ Հայաստանի պետական վերածնունդէն ի վել կառավարութիւնը մի քանի տարուան մէջ հիմնեց Հայաստանի Հնութեանց Պահպանութեան կոմիտէն, ինընըստինքեան կ'ա

պացուցանէ որ մի պետութիւն միայն կա
ըսդ է ձեռնարկել այդպիսի երկարաշուն
աշխատանքի իր գիտական հաստատու
թեանց ղեկավարութեան տակ։ Նախա
պատմութեան եւ հնախօսութեան ուսու
մները կը պահանջեն տարիների լուրջ և
մեթուսիկ աշխատանք, գիտական կազ

մակերպութիւն եւ մասնագիտական դաս-
տիարակութիւն։ Անցեալի մէջ տասնեակը-
ներով հայ տաղանդաւոր հետախուզողներ
եւ պատմագէտներ բնականարար չէին կա-
րող հիմնել հնախօսութեան ազգային մի-
ուպրոց, այս վերջին բառը ընդունելով իր
լայնագոյն առումով։ Մեր գիտնականները
պարտաւոր էին ուսանիլ օտար համալսա-
րանների մէջ, հայթայթել նիւթեր եւ կամ
գործակցիլ օտար գիտնականներին, եւ յա-
ճախ իրենց անձնական ուսումնասիրու-
թեանց արդիւնքները հրատարակել օտար
լեզուով եւ օտար գիտական հանդէսների
մէջ։ «Բազմավէպ», «Հանդէս Ամսօրեայ»,
«Արարատ» կամ «Բանասէր» մեծ մա-
սամբ կու տային օտար գիտնականների
գիւտերն ու կարծիքները, եւ մենք չու-
նէինք ուրիշ միջոց այլ հետեւելու անոնց՝
յաճախ զուրկ անկախ ուսումնասիրութենէ
ծնած տեսակէտներէ։ Ի հարկէ ըստ գի-
տական մեթոդին եւ մտաւորական ուղ-
ղագատութեան, նախապատմութիւն եւ
հնախօսութիւն միջազգային առարկայա-
կան գիտութիւններ են, որոնց մշակման
ու զարգացման մէջ ազգ։ տեսակէտներ
ու եւ է դեր պէտք չէ խաղան։ Խնչ չափով
որ ի վիճակի եղած եմ հետեւելու մեր
բանասիրական գրականութեան, այնչա-
փով համոզուած եմ որ մեր անցեալ ու
ներկայ գիտական միջավայրին մէջ կը
տիրապետէ այդ հաւատըք։ Այժմ խնդիր
է թէ նո՞յնն է նաեւ օտար որոշ շրջան-
ների վերաբերմունքը առ այդ գիտութիւն-
ները։ Միթէ ամենազգի գիտնականներն
ու մասնագէտները հնախօսական գիւտերն
կ'ուսումնասիրեն եւ կը մեկնարաննեն զուտ
գիտական հիմքերի վրայ։ Միթէ ազգ։
նախանձը, մօտաւոր կամ հեռաւոր քա-
ղաքական անդրադարձումները, եւ մաս-
նաւորապէս գիտնականների անձնական
համակրութիւններն ու հակակրութիւնները
յաճախ մի կարեւոր դեր չեն խաղար նա-
խապատմութեան ուսումների մարզին մէջ։

Հետագայ էջերի մէջ ըստ կարգին պիտի
ակնարկեմ այդ խնդիրներին՝ փորձելով
սահմանաւորել մեր հետեւելիք ուղեգիծը

1. Ա'ենթաղրեմ թէ աւելի բանաւոր է մեր նախնեաց թէստացի կոչած (Hittites) անունին տալ բուն իրենց զորձածած «Խաթթի» գոփոխակը:

գուցեալ Գը. Հօլ¹ կէս - հեզնական շեշտապվ կը զրէ որ «Խաթթի նմանութիւնը Բրուսիոյ հետ անտեղի չէ իր հպատակդաշնակիցների յարաբերութեամբ; Խաթթիները կը թուին ունեցած լինել որոշ Բրուսիական յատկանիշեր եւ Շուրբիլութեումա (Խաթթի ամենազօր թագաւորներէն մէկը. 1390 Ք. Ա.) վայելչօրէն պիտակուած է որպէս Խարրիական Բիսմարկ; Կարճ եւ կտրուկ զինուորական գործողութիւնների եւ խնամեալ էնթրիկների մի պատմութիւն որոնցմով Շուրբիլուկեումա հասաւ իր նպատակին, այսինքն իր գերիշխանութիւնը հարկադրեց դաշնակից պետութիւնների վրայ...» են: Յոյժ ցաւալի, բայց բնորոշող բնաւորութիւն ունի յառաջ բերելիք երկրորդ օրինակը: Յաւալի է որովհետեւ զուտ պատմագիտական խնդիրների մէջ տեղ չունի քաղաքականութիւն: Եւ սակայն պարտաւոր եմ յիշել զայն ի շահ ուղիղ պատմագրութեան: Անզիոյ եւ աշխարհի որոշ մասերի մէջ Քէմպրիճի համալսարանը ընդունուած է իրբեւ գիտութեան եւ պատմագրութեան «հեղինակաւոր» մի վառարան: Նա հրատարակած է ահազին գրականութիւն ամէն ճիւղի վերաբերեալ: Մօտ 30 տարի առաջ անոր լոյս ընծայած Ժամանակից պատմորիշելը, բաղկացած 12 ստուար հատորներէ, միակողմանի եւ զիտակցաբար խեղաթիւրեալ է գոնէ հայկական խնդրի վերաբերմամբ: Շատ աւելի նախապաշտրեալ ու ողորմելի ոգիով զրուած է Հայկական Միջնադարը այդ Համալսարանի կողմէ հրատարակուած քառահատոր «Միջնադար»ին մէջ²: Այժմ այդ նախաձեռնարկ հաստատութիւնը սկսած է հրատարակել աշխարհին հնագոյն պատմութիւնը («Cambridge, Ancient History») որ պիտի բաղկանայ տասը մեծ հատորներէ: Ասկէ մօտ հինգ տարի առաջ հաստատութիւնը հայտնաբերված է տարուէ տարի ըստ կայսերական կառավագանութեան մասին պատմութիւնը: Խաթթիների մասին կայ հետեւեալ ակնարկութիւնը: Նկարագրելէ յետոյ Խաթթիների շուրջ համամբուած Հնդ-Եւրոպական ժողովուրդների շարժումներն ու լեզուները, հեղինակը կը շարունակէ. «... Առ այժմ որոշապէս չզիտենք անոնց (այդ ցեղերի) թափառումների ընթացքը, սակայն անոնց պէտք է հետեւած լինի այժմ Հայ անունվագի մեզ ծանօթ ժողովուրդը, որ ինչպէս Հերոդոտոսի ժամանակը նոյնպէս եւ ներկայի նստած էր Եփրատի վերին ակունքի վրայ - մի ազգաբնակուրին որ հպատակ էր մի օտար կայսրուրեան, ձիւտ ինչպէս նա հպատակ է այսօր, թեւ այդ օտարը Զդարին Ք. Ա. կայսրուրինն եր Մեծն Դարձին...»³. (ստորագծումն իմս է. Ա. Ա.): Աա ի՞նչ «գիտական» մեթոդ եւ «պետական իրաւունք»ի տեսակէտ է որոնց մով Քէմպրիճի պատմաբանները նկատի կ'առնեն խնդիրները: Պարզ է որ անոնց վեհապետուրին եւ հպատակուրին բառերը մեկնաբանեն ամենանեղ եւ ամենաձեւական հասկացողութեամբ: Սակայն եթէ մանրամասնօրէն քննենք այդ կէտը մենք կը ստանանք հետեւեալ արդիւնքը: Երբին Ք. Ա. Հերոդոտոս կը զըկը որ Հարութիւնը Ասեմեննեան կայսրութեան ժողուածութիւնը: Խակ ինքն Դարձն Վըշտասպ՝ Բիսիթունի իր հոյակապ արձանագրութեան մէջ կը նկարագրէ իր երկամեայ ճակատամարտները «Խայթելու» համար հայ ապետամբները (Դարձնի բառն է սա) որոնք չեն ձանաչեր ինձ: Երբ այսէս կը զուած «վեհապետական մի կայսերէս այս հարկադրուած է տարուէ տարի ըստ կայսերական կառավագանութեան մասին պատմութիւնը: Խայթելու» համար մի բանակ ուղարկել «Խայթելու» համար մի պատմակ» ազգ, դժուար է ըսել թէ Քէմպրիճի գիտնականները ինչպէս կը հաշուած այս հատորներէ: Ասկէ մօտ

1. H. R. Hall: «The Hittites and Egypt», *Anatolian Studies*, presented to Sir William M. Ramsay. Manchester University press. 1923, £1 74-75.

2. Այդ մասին մանրամասնորէն զրած էի Գրահերէի
 «Արևածագը» թիւթիւն մէջ, 1924-ի Յանվարին:
 3. «Cambridge Ancient History», հատոր Բ. էջ
 18. 1925, Cambridge University press.

տեցնեն այս եզրերը։ Այդ մարդոց համար Հերողոտոսի պատմութիւնը մի ուղղափառ սրբութիւն սրբոց է գոր պէտք է ընդունիլ տառականօրէն, առանց հաշուփ առնելու բառերի բովանդակութիւնը, անջըռպետի եւ ժամանակի հակայական տարբերութիւնները։ Գալով այսօրուան Հայաստանի Ա. Խ. Հանրապետութեան պետական statut ընդունակ է երկու մեկնութեան։ — ըստ ձեւի եւ ըստ էութեան։ Եութիւնը այժմ պիտի թողնենք, ինչպէս Քէմպրիճի զիտնականները կ'ընեն Դարեհի ժամանակուան Հայաստանի վերաբերմամբ։ Իսկ ըստ ձեւի Հայաստանը հաւասարագոր մի անկախ պետութիւն է համառուսական հանրապետութեանց միութեան մէջ։ Արդերք Քէմպրիճի պատմագիրները Ե դարու Ք. Ա. Հայաստանի իրաւակարգը նկատի կ'առնեն պետական իրաւունքի ձեւական տեսակէտէն, ինչու միեւնոյն տեսակէտէն չեն դատեր այսօրուան Հայաստանը։ Ընթերցողին կը մնայ եզրակացնել թէ այսպիսի մի ներկայացում հետեւանք է տպիտութեան թէ յետին մտքերի։ Կարծեմ աւելի ուղիղ կը լինէր ենթազրել որ այդ մարդիկ, ինչպէս նաեւ Արդունի որոշ «զիտնականներ» բնագդաբար կը սիրեն միշտ «Հպատակ» տեսնել որոշ հին ազգեր, ինչպէս Խոլանտացիներ, Հնդիկներ, եւայլն։ ուրեմն իրենց ցանկութիւնները մի կերպով կը հաշտեցնեն բաղաբականապէս առաձգական իրենց ըմբռնումների հետ։

չեւ այսօր, զիտնական ու քաղաքակիրթ համարուող ազգերի մէջ։ Ներկայացման այդ ձեւը առանձնապէս կը ստանայ վըտանգաւոր բնոյթ այն ազգերի համար որոնք չունին համապատասխան միջոցներ պաշտպանելու իրենց տեսակէտները եւ ուղղելու զործուած սխալը։

Յանուն անկողմնակալութեան պէտք է աւելացնել նաեւ որ ընդունելով հանգերձ որոշ շրջանների անբուժելի միակողմանիութիւնը, կան նաեւ ամենազգի պատմաբաններ որոնք անզիտակից զոհեր են անցեալի սխալ աւանդութեանց։ Նոր ժամանակների մէջ դարերով հպատակ եղող մի ազգի անցեալը ուսումնասիրով Արեւմուտցի զիտնականը հոգեբանօրէն տրամադրուած է Արշակունիների ժամանակ էլ Հայաստան հպատակ տեսնելու։ Վերջի վերջոյ նա օտարական է, եւ ուրեմն չունի մեր միջավայրի միջցեղային յարաբերութեանց իրական զիտակցութիւնը, եւ նա աւելի հակում ունի միջնադարեան մի կացութիւն բննել իր այսօրուան փորձառութեան լոյսով, ոչ իսկ սեփական երկրի, Անգլիոյ կամ Ֆրանսայի միջնադարեան դրութեան չափով։

Խւրաբանչիւր ազգի պարտականութիւնն է աշխարհին մատուցանել իր սեփական հայեացը իր անցեալի մասին։ Ուղիղ ներկայացուելու եւ ուղիղ դատուելու ուրիշ միջոց չկայ։

Բարեբախտաբար այժմ արդէն կան հընալրաւորութիւններ մշակելու Հայաստանի մասունքներ մուտքագրութեան առաջական հայեացը իր անցեալի մասին։ Ուղիղ ներկայացուելու եւ ուղիղ դատուելու ուրիշ միջոց չկայ։

Ազգայնական նախապաշտումներով եւ դիտաւորեալ միակողմանիութեամբ պատմութիւն գրելու այս եղանակը գոյութիւն նախապատմութիւնը սրբ ուսուցչութիւնը հարկին գործակցաբար Աւելմուտքի գիտնականների հետ։

(Շաբունակելի)

ԱՐԵՎԱԿ ՍԱՖՐԱՆՏԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՇԱՊ ԳՈՐԳԵՐՈՒ ԱՌԱՍՊԵԼԸ

Հայկական նաեւ հիւսիսարեւմտեան Պարսկաստանէն ու արեւելեան Փոքր Ասիայէն եկող զորգերուն տեսականին համար աղիտարեր է փաստերու այն շեղը որ անոնց իբր բնավայր կովկասը ցոյց կու տայ: Այս փաստերը միայն համառոտ կերպով կարելի է մէջ բերել:
Վերջնական եզրակացութեան մը գալու համար այս գորգերուն բնավայրի մասին առաջին կարեւոր քայլը, զանոնց աւելի սեղմ դասակարգի վերածելն է քանինչ որ եղած է ցարդ: Ասիկա գոհացուցիչ կերպով կատարելու համար, կարեւոր է հրատարակութիւնը բազմաթիւ փոփոխուող եւ շրջագօտիներու օրինակներուն, նաեւ հիւսելու արհեստին մանրամասն վերլուծող տախտակներու, որ ամէն նկատումէ վերջ շատ կը մօտենայ այս տեսակ հարցերու մասին վերջին խօսքն ըսելու: Այսպիսի նպատակ մը հոս կարելի չէ գործազրել, սակայն պատճառարանութեանց ընդհանուր ուղին կարելի է որոշել:
Գորգերու առաջին խումբին, որ ամբողջութեան ամենազեղեցիկ եւ հնագոյն կտորներու մեծագոյն մասը կը պարունակէ, ուրիշներու կարգին պէտք է նշանակէլ հետեւեալները. Նորիսթառուն թէնսիլուանիա բնակող Զոփո Ուլիւամզի² հաւաքածոյին գորգը, որուն նման հատ մ'ալ է Ուէսէսորո Բէնսիլուանիա Մր. Բ. Ա. Շարբէմի³ կը պատկանի, այժմ նիւ Եօրքի Ալթման եւ Ընկերութեան պատկանող եւ որ ժամանակին Մինիիի ցուցահանդէսին զուցադրուած կապերուը⁴. զորգ մ'ալ որ կը գտնուի Պոստոնի բարձր Գեղարուեստի թանգարանին մէջ որուն նման է նիւ Մէթրոպոլիթան Միւզէի Պալլարեօրքի Մէթրոպոլիթան Միւզէի Պալլարեան հաւաքածոյինը⁵, յետոյ աննման գորգի պատառիկը՝ որ նախապէս Լուսն հաւաքածոյին, իսկ այժմ Մր. Ճորժ Հուսկիթ Մէյրզի⁶ կը պատկանի ի Ուաշինգթուն, Ման ֆրանչիսքոցի Տիկին Տ. Զ. Ճագալինի⁷ պատկանող կապերուը, նաեւ Վինսենտի Արևեստներու եւ Արուեստներու թանգարանին, նիւ Եօրքի Մր. Հարի Բայն Պինչամի⁸ պատկանող կտորները, ու քանի Պինչամի պատկանող կտորները, ինչ որ մը շրջանակներ ունեցող կտորը, ինչ որ աւելի վերջնթեր է քան նախորդներու հընութիւնը, որ կը պատկանի Ֆիլատէլուութիւնը, յատակի մը վրայ են: Այս գործական ամբողջն ալ ուրիշ յատկանշական նկարագիրներէ զատ ունին ուժեղ կերպով նկարագիրներէ զատ ունին ուժեղ կերպով զծուած ծաղկենկարներ խորունկ եւ սուր կերպով սղոցածեւուած: Եւ եթէ անոնց վիշապածեւերուն հետ կենդանակերպեր ունին, ատոնք աչքի զարնող չեն եւ ընդունին, ատոնք աչքի զարնող չեն եւ ընդունին:

1. Այս յօդուածին «The Mythe of the Armenian Dragon Carpets, by Arthur Upham Pope» առաջնական մասը թարգմանելով՝ հրատարակած եմ «Բազմագլուխություն» մեջ՝ 1930 էլ 377.
 2. Արտասպառած W. R. Valentiner Early Oriental Rugs N. Y. 1910 N. 2. Եւ Catalog of Loan exhibition of Asia Minor Carpets, at the Pennsylvania Museum Philadelphia 1919.
 3. Արտասպառած Bode-Kuehnel op. cit. Abb.
 56. 4. Valentiner op. cit. N. 3 են.
 4. Meisterwerke Mughalmedanien
Kat. nr. 92. Tafel 63. եւ Jacoby op. cit.
 5. Breck-Moris op. cit.
 6. Արտասպառած Martin op. cit. Plate XXIII.
 7. Անդ Fig. 295.
 8. Արտասպառած Catalog Loan collection of Oriental rugs Cleveland Museum of Art, 1920.
 9. Արտասպառած Valentiner op. cit. N. 4: Pennsylvania Museum op. cit. Cleveland Museum op. cit.